

Բացառվող ծառայություններ

Բժշկական ծառայություններ, որոնց համար **բժշկական ապահովագրությունը** կամ **ծրագիրը** չի վճարում կամ որոնք այն չի ծածկում:

Բողոք

Բողոք, որը դուք հայտնում եք ձեր բժշկական ապահովագրին կամ **ծրագրին**:

Աղյալացման ծառայություններ

Բժշկական ծառայություններ, որոնք օգնում են անձին պահպանել, ձեռք բերել կամ բարելավել առօրյա կենսագործունեության հմտություններ և գործառնության կարողություններ: Օրինակները ներառում են ակնկալվող տարիքում չքայլող կամ չխոսող երեխայի թերապիա: Այս ծառայությունները կարող են ներառել ֆիզիկական և աշխատանքային թերապիան, խոսքի-լեզվական պաթոլոգիաները և այլ ծառայությունները անկարողություններով մարդկանց համար զանազան ներհիվանդանոցային և/կամ արտահիվանդանոցային հաստատություններում:

Բժշկական ապահովագրություն

Պայմանագիր, որով պահանջվում է, որ ձեր բժշկական ապահովագրություն տրամադրողը վճարի ձեր բուժօգնության ծախսերի մի մասը կամ այդ ծախսերն ամբողջությամբ **ապահովագրավճարի դիմաց**:

Տան պայմաններում բժշկական խնամք

Բժշկական ծառայություններ, որոնք անձը ստանում է տանը:

Հոսպիտալ ծառայություններ

Մահացու հիվանդության վերջին փուլերում գտնվող անձանց և նրանց ընտանիքներին կարեկցանք և աջակցություն տրամադրելու ծառայություններ:

Հոսպիտալացում

Բժշկական խնամք հիվանդանոցում, որը պահանջում է ընդունում ներհիվանդանոցային հաստատություն և սովորաբար պահանջում է գիշերային կացություն: Դիտարկման նպատակով գիշերային կացությունը կարող է ամբուլատոր խնամք համարվել:

Ամբուլատոր խնամք հիվանդանոցում

Խնամք հիվանդանոցում, որը սովորաբար գիշերային կացություն չի պահանջում:

Ներցանցային համաապահովագրություն

Թույլատրելի գումարի այն տոկոսը (օրինակ՝ 20%) ծածկույթի մեջ ընդգրկված բժշկական ծառայությունների համար, որը վճարում եք **ծառայություններ մատուցողներին**, որոնք

Պայմանագիր են կնքում ձեր **բժշկական ապահովագրության** կամ **ծրագրի հետ**: Ներցանցային համաապահովագրությունը սովորաբար ավելի քիչ արժե, քան **արտացանցային**

համաապահովագրությունը:

Ներցանցային Համավճար

Ֆիքսված գումար (օրինակ \$15), որը Դուք վճարում եք ապահովագրված առողջապահության խնամքի ծառայությունների համար այն մատակարարներին, որոնք պայմանագրեր ունեն Ձեր առողջության ծածկույթը կամ ծրագրերը տրամադրողների հետ: Ներցանցային համավճարները սովորաբար ավելի քիչ են լինում, քան արտացանցային համավճարները:

Բժշկական առումով անհրաժեշտ

Բժշկական ծառայություններ կամ պարագաներ, որոնք անհրաժեշտ են կանխարգելելու, ախտորոշելու կամ բուժելու համար հիվանդությունը, վնասվածքը, վիճակը, կամ դրա ախտանիշները, և որոնք համապատասխանում են բժշկության ընդունված ստանդարտներին:

Ցանց

Հաստատությունները, **ծառայություններ մատուցողները** և մատակարարները, որոնց հետ Ձեր բժշկական ապահովագրողը կամ **ծրագիրը** կնքել է բժշկական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ոչ նախընտրելի ծառայություններ մատուցող

Ծառայությունների մատուցող, որը պայմանագիր չի կապել ձեր բժշկական ապահովագրողի կամ **ծրագրի հետ**՝ ծառայություններ մատուցելու վերաբերյալ: Դուք ավելի շատ գումար կվճարեք ոչ նախընտրելի մատուցողին այցելելու համար: Կարողացեք մեր կանոնները տեսնելու համար, արդյոք դուք կարող եք դիմել բոլոր ծառայություններ մատուցողների, որոնք պայմանագիր ունեն ձեր բժշկական ապահովագրողի կամ **ծրագրի** հետ կամ արդյոք ձեր բժշկական ապահովագրողը կամ ծրագիրը ունի «բազմամակարդակ» **ցանց** և դուք պետք է ավելին վճարեք ծառայություններ որոշակի մատուցողներին դիմելու համար:

Արտացանցային համաապահովագրություն

Թույլատրելի գումարի տոկոսը (օրինակ, 40%), որը դուք վճարում եք ծածկույթի մեջ ընդգրկված բժշկական ծառայությունների համար այն մատուցողների, ովքեր պայմանագիր չունեն ձեր բժշկական ապահովագրողի կամ **ծրագրի** հետ: Արտացանցային համաապահովագրությունը սովորաբար ավելի թանկ է, քան **ներցանցային համաապահովագրությունը**:

Արտացանցային համավճար

Ֆիքսված գումար (օրինակ \$30) որը Դուք վճարում եք ծածկույթի մեջ ընդգրկված բժշկական ծառայությունների համար համար այն մատուցողների, ովքեր պայմանագիր չունեն ձեր բժշկական ապահովագրողի կամ **ծրագրի** հետ: Արտացանցային համավճարները սովորաբար ավելի թանկ են, քան **ներցանցային համավճարները**:

Մեփական միջոցներից կատարվող ծախսերի սահմանաչափ

Առավելագույն գումարը, որը վճարում եք փոխի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարի) մինչև ձեր **բժշկական ապահովագրությունը** կամ **ծրագիրը** սկսում է վճարել թույլատրելի գումարի 100%

Այս սահմանաչափի մեջ երբեք չի ներառվում Ձեր **ապահովագրավճարը**.


Հաշվեկշռային հաշվի

ծախսերը այն բժշկական խնամքի համար, որը ընդգրկված չէ ձեր ապահովագրության կամ ծրագրի մեջ:

Որոշ բժշկական ապահովագրողներ կամ ծրագրեր չեն հաշվում ձեր բոլոր **համավճարները, մասհանումները, համաապահովագրական** վճարները, արտացանցային վճարումները կամ այդ սահմանաչափի հաշվին այլ ծախսերը:

Թերապևտի ծառայություններ

Այն բժշկական ծառայությունները, որոնք տրամադրում կամ համակարգում է լիցենզավորված թերապևտը (M.D. – Թերապիայի գծով բժիշկը or D.O. – Օստեոպատիայի գծով բժիշկը):



(Տե՛ս էջ 4-ը մանրամասն օրինակի համար:)

Ծրագիր

Օգուտ, որը Ձեր գործատուն, արհմիությունը կամ այլ խմբային սպունդոր տրամադրում է Ձեզ՝ Ձեր բժշկական ծառայությունների դիմաց վճարելու համար:

Նախնական լիազորում

Ձեր բժշկական ապահովագրի կամ **ծրագրի** կողմից որոշում առ այն, որ բժշկական ծառայությունը, բուժման պլանը, **դեղատոմսով դեղորայքը** կամ **երկարաժամկետ բժշկական սարքավորումը բժշկական առումով անհրաժեշտ է**: Երբեմն այն կոչվում է նախնական լիազորում, նախնական հաստատում կամ նախնական հավաստագրում: Ձեր **բժշկական ապահովագրությունը** կամ ծրագիրը կարող է պահանջել որոշակի ծառայությունների նախնական լիազորում, մինչև Ձեր կողմից դրանք ստանալը, բացառությամբ հրատապ դեպքերի: Նախնական լիազորումը խոստում չէ առ այն, որ ձեր բժշկական ապահովագրությունը կամ պլանը կվճարի ծախսերը:

Ծառայություններ նախընտրելի մատուցող

Ծառայություններ նախընտրելի մատուցող, որն ունի պայմանագիր Ձեր բժշկական ապահովագրի կամ **ծրագրի** հետ՝ ձեզ գեղջված ծառայություններ մատուցելու համար: Մտուցեք Ձեր փոլիսը՝ տեսնելու համար արդյոք Դուք կարող եք դիմել բոլոր նախընտրելի մատուցողներին կամ արդյոք Ձեր **բժշկական ապահովագրությունը** կամ ծրագիրն ունի բազմամակարդակ **ցանց** և դուք պետք է ավելի շատ վճարեք մատուցողներին դիմելու համար: Ձեր բժշկական ապահովագրությունը կամ ծրագիրը կարող է ծառայությունների նախընտրելի մատուցողներ ունենալ, որոնք նույնպես «մասնակցող» մատուցողներ են: Մասնակցող մատուցողները նաև պայմանագիր են կնքում ձեր բժշկական ծառայություններ մատուցողի կամ ծրագրի հետ, սակայն գեղջը չի կարող այդքան մեծ լինել և հնարավոր է, որ դուք ավել վճարեք:

Ապահովագրավճար

Գումար, որը պետք է վճարվի **բժշկական ապահովագրությանը** կամ **ծրագրին**: Դուք և/կամ ձեր գործատուն սովորաբար այն վճարում եք ամսական, եռամսկայային կամ տարեկան տեսքով:

Դեղատոմսով տրվող դեղորայքի ծածկույթ

Բժշկական ապահովագրություն կամ **ծրագիր**, որն օգնում է վճարել **դեղատոմսով տրվող դեղորայքի** և դեղամիջոցների համար:

Դեղատոմսով տրվող դեղորայք

Դեղորայք և դեղամիջոցներ, որոնց տրման համար օրենքով դեղատոմս է պահանջվում:

Առաջնային բուժօգնության թերապևտ

Թերապևտ (M.D. – Թերապիայի գծով բժիշկը or D.O. – Օստեոպատիայի գծով բժիշկը), որն ուղղակիորեն տրամադրում է մի շարք բժշկական ծառայություններ հիվանդին կամ համակարգում է այդ ծառայությունները:

Առաջնային բուժօգնություն տրամադրող

- Թերապևտ (M.D. – Թերապիայի գծով բժիշկը or D.O. – Օստեոպատիայի գծով բժիշկը), բարձր որակավորում տնեցող բուժբույր, կլինիկական բուժբույր, մասնագետ բուժբույր կամ թերապևտի օգնական, որը ըստ նահանգային օրենքի, տրամադրում, համակարգում կամ օգնում է հիվանդին օգտվել մի շարք բժշկական ծառայություններից:

Ծառայություններ մատուցող

Բժիշկ ՉM.D. – Թերապիայի գծով բժիշկը or D.O. – Օստեոպատիայի գծով բժիշկը), բժշկական մասնագետ կամ բժշկական հաստատություն, որը լիցենզավորված, հավաստագրված կամ հավատարմագրված է՝ ինչպես պահանջվում է նահանգային օրենքով:

Վերականգնողական վիրաբուժություն

Վիրաբուժություն և հետագա բուժում, որոնք անհրաժեշտ են մարմնի մեկ մաս բարելավելու համար՝ բնածին թերությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների կամ առողջական վիճակներից ելնելով:

Վերականգնողական ծառայություններ

Բժշկական ծառայություններ, որոնք օգնում են անձին պահպանել, վերականգնել կամ բարելավել առօրյա կենսագործունեության հմտությունները և գործառնությունները, որոնք կորցվել կամ թերի են, քանի որ անձը հիվանդ, վնասված կամ անկարող էր: Այս ծառայությունները կարող են ներառել ֆիզիկական և աշխատանքային թերապիան, խոսք-լեզվային պաթոլոգիան և հոգեկան վերականգնողական ծառայություններ՝ մի շարք ներհիվանդանոցային և/կամ արտահիվանդանոցային պայմաններում:

Մասնագիտացված բուժքույրական խնամք

Ծառայություններ լիցենզավորված բուժքույրերից ձեր տանը կամ պանսիոնատում: Մասնագիտացված խնամքի ծառայությունները տրամադրում են մասնագետներ և թերապևտներ ձեր քաղաքում կամ ինտերնատում:

Մասնագետ

Մասնագետ բժիշկը կենտրոնանում է բժշկության որոշակի բնագավառի կամ հիվանդների մի խմբի վրա՝ ախտորոշելու, կառավարելու, կանխարգելելու կամ բուժելու որոշակի ախտանիշներ և վիճակներ: Բժիշկ չհանդիսացող ծառայություններ մատուցող այն **ծառայություններ մատուցողն է**, որը ավելի շատ ուսուցում է անցել բժշկության որոշակի բնագավառում:

UCR (Մովորական, Հնդունված և Ողջամիտ)

Բժշկական ծառայության համար աշխարհագրական տարածքում վճարվող գումար, որի հիման վրա **ծառայություններ մատուցողները** այդ տարածքում սովորաբար գանձում են նույն վճարը նույն կամ նմանատիպ բժշկական ծառայության համար: UCR գ ու մ ա բ ը է բ բ մ ն օ գ ա գ ո թ ծ վ ու մ է **թույլատրելի գումարը որոշելու համար**:

Անհատալ խնամք

Հիվանդության, վնասվածքի կամ այնպիսի լուրջ վիճակի խնամք, որի դեպքում ողջամիտ անձը անմիջապես օգնություն կհայցի, սակայն որը այնքան ծանր չէ, որ պահանջի **շտապօգնության սենյակում օգնություն**:

Ձեր և Ձեր Ապահովագրի Կողմից Ծախսերը Կիսելու Եղանակը՝ Օրինակ

Ձեյնի Օրագրի Մասհանումը՝ \$1,500

Համաապահովագրություն 20%

Սեփական Միջոցներից Ծախսերի Սահմանաչափ՝ \$5,000

Հունվարի 1
Ծածկույթի
ժամանակահատված
ի սկիզբ


Դեկտեմբերի 31՝
Ծածկույթի
ժամանակահատվածի
ավարտ



Ձեյնը վճարում է 100%
Նրա ծրագիրը վճարում է 0%

Ձեյնը դեռևս չի հասել իր **\$1,500 մասհանմանը**
Նրա ծրագիրը որևէ ծախսեր չի վճարում:
Արտահիվանդանոցային այցելությունն արժի \$125
Ձեյնը վճարում է \$125
Նրա ծրագիրը վճարում է՝ \$0

→
ավելի շատ
ծախսեր



Ձեյնը վճարում է 20%
Նրա ծրագիրը վճարում է 80%

Ձեյնը հասնում է իր **\$1,500 մասհանմանը, համաապահովագրությունը սկսվում է** Ձեյնը մի քանի անգամ այցելել է բժշկի և վճարել է ընդամենը \$1,500: Նրա ծրագիրը վճարում է որոշ ծախսեր նրա հաջոր այցի հետ կապված Արտահիվանդանոցային այցելությունն արժի \$75
Ձեյնը վճարում է 20% of \$75 = \$15
Նրա ծրագիրը վճարում է՝ 80% of \$75 = \$60

ավելի շատ
ծախսեր



Ձեյնը վճարում է 0%
Նրա ծրագիրը վճարում է 100%

Ձեյնը հասնում է իր **\$5,000 սեփական միջոցներից ծախսերի սահմանաչափին**
Ձեյնը հաճախ է այցելել բժշկին և վճարել է ընդամենը \$5,000:
Նրա ծրագիրը վճարում է ծածկույթում ընդգրկված բժշկական ծառայությունների ծախսերն ամբողջությամբ՝ տարվա մնացած մասի համար:
Արտահիվանդանոցային այցելությունն արժի \$200 Ձեյնը վճարում է \$0
Նրա ծրագիրը վճարում է՝ \$200